

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/8**

ք. Երևան

06.09.2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արիովշին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 2017 թ. նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում կատարվող աշխատանքների համար կատարման վերջնաժամկետ է սահմանվում 15.11.2017 թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե Աշխատանքի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սույն պայմանագրի N 4.2 Հավելվածով սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուս պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուսի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուսի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուս Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուս հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուսին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուսին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուսի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուսին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուս պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուսի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի

մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետև՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 316074960 (երեք հարյուր տասնվեց միլիոն յոթանասունչորս հազար ինը հարյուր վաթսուն, այսուհետև՝ պայմանագրի ընդհանուր գումար) ՀՀ դրամ, որից՝ 52679160 (հիսուներկու միլիոն վեց հարյուր յոթանասունինը հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Սույն պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետում Կապալառուի կողմից N 1.1 հավելվածով նախատեսված՝ նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան իրականացվելիք աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 39292600 (երեսունինը միլիոն երկու հարյուր ինսուներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ (այսուհետև՝ պայմանագրային գումար), որից՝ 6548767 (վեց միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար յոթ հարյուր վաթսուներթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.1.2 Կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով՝ վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել կանխավճար:

5.1.3 Պայմանագրային գումարից մինչև 20000000 (քսան միլիոն) ՀՀ դրամը Պատվիրատուն՝ պայմանագրի կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթի առկայության դեպքում, փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է 2017թ. առկա ֆինանսական միջոցների շրջանակներում ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրային գումարի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով՝ անկանխիկ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին

փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_{\text{ԳՏ}} = V_{\text{Գ}} / (1 + X \cdot T / 360)$, որտեղ՝

$V_{\text{Գ}} -$ Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

$X -$ շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

$T -$ նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

$V_{\text{ԳՏ}} -$ ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՔԱՂԹԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում՝ սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի՝ կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ,

համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 4.2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի Ր ա տ ու՝

«Կառավարությանն առնթեր
թաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
«Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Կ 900011011872
ՀՎՀՀ 02565827


Կ ա պ ա լ ա ռ ու՝

«Արիովշին» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ
թաղամաս, 17/1 շենք, բն.14
«Հայրիզնեսրանկ» ՓԲԸ
Հ/Կ 115000714333380
ՀՎՀՀ 00110978

Աշխատակազմի ղեկավար՝



Տնօրեն՝



Գրիգորյան

Կ.Տ.

Handwritten signatures and initials at the bottom of the document.

Հավելված N 3

06.09.2017թ.

կնքված աշխատանքների կատարման
N «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/8» գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգում	24557875	39292600	39292600	39292600	39292600

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով

Պ ա տ վ ի Ր ա տ ու՝

ՀՀ կառավարության առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011872
ՀՎՀՀ 02565827


Կ ա պ ա լ ա ռ ու՝

«Արիովշին» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ
թաղամաս, 17/1 շենք, բն.14
«Հայրիզներանկ» ՓԲԸ
1150007143333380
ՀՎՀՀ 00110978

Աշխատակազմի ղեկավար՝



Տնօրեն՝



Handwritten signature at the bottom of the page.

Հավելված N 2
 06.09.2017 թ.
 կնքված աշխատանքների կատարման
 N «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/8» գնման պայմանագրի

ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ


Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման
 աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Առաջին մասնաշենքի էլեկտրա-մոնտաժային աշխատանքներ	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017
2	Առաջին մասնաշենքի ջեռուցման աշխատանքներ	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	10.10.2017
3	Առաջին մասնաշենքի ընդհանուր շինարարական աշխատանքներ	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	22.10.2017
4	Դահլիճների մասնաշենքի ընդհանուր- շինարարական աշխատանքներ	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	15.11.2017


Պ ա տ վ ի Ր ա տ ու՝
 ՀՀ կառավարությանն առընթեր
 քաղաքաշինության պետական կոմիտե
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ
 կառավարական տուն 3
 ՀՀ ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 Հ/Հ 900011011872
 ՀՎՀՀ 02565827

Կ ա պ ա լ ա ռ ու՝
 «Արհովին» ՍՊԸ
 ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ
 թաղամաս, 17/1 շենք, բն.14
 «Հայրիզնեսրանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1150007143333380
 ՀՎՀՀ 00110978

Աշխատակազմի ղեկավար՝



Տնօրեն՝



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____

և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով
Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը
նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝
ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված
տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը
հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Կատարված աշխատանքի				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը
հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց՝

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց՝

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված N 4.1

06. 09.2017թ.

կնքված աշխատանքների կատարման
N «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/8» գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ -----ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)

-----ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ----- -ին կնքված N -----
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ----- -- -ին հանձնման-
ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց՝

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/8

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

06.09.2017թ.

<<Արիովչին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման** աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/8» ծածկագրով բաց գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետև՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետև՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ


2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝


Ընկերության անվանումը՝	<<Արիովչին>> ՍՊԸ
Հասցեն՝	ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/1 շենք, բն.14
Սպասարկող բանկի անվանումը	<<Հայթիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ	115000714333380
ՀՎՀՀ	00110978

Տնօրեն



գլխ. հաշվապահ

(ստորագրություն)

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՎԱՆՋԱԳԻՐ N (պայմանագրի կարարման ապահովում)	
2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ <<Արիովչին>> ՍՊԸ	
4. Վճարողի բանկը՝ <<Հայրիզնեսրանկ>> ՓԲԸ	
5. Վճարողի հաշվի համարը՝ 1150007143333380	
6. Վճարողի ՀՎՀՀ՝ 00110978	
7. Վճարողի ՀԾՀ՝	
8. Շահառու՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն ադրնթեր քաղաքաշինության պետական կոմիտե	
9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
10. Շահառուի բանկը՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
11. Շահառուի հաշվի համարը /h2.N/ 900005000758	
12. Գումարը թվերով և բառերով՝ 31607496 (երեսունմեկ միլիոն վեց հարյուր յոթ հազար չորս հարյուր իննսունվեց)	
13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD	
14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի ապահովում՝ տուժանքի ձևով	
15. Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/8»	
16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը	
17. կից	
19.ա. Շահառուի ստորագրությունները	18.ա. Վճարողի ստորագրությունները՝
/ _____ /	
/ _____ /	
19.բ. Կ.Տ.	18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից	Կատարված է վճարողի բանկի կողմից
20.ա. / _____ /	21.ա. / _____ /
/ստորագրություն/	/ստորագրություն/
20.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ.
"___" ___ 20___թ.	22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

**Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և
օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող
նվազագույն պահանջներ**

Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման շինարարության ընթացքում օգտագործվող բոլոր նյութերը և սարքերը, ինչպես նաև՝ պատերի տորկրետավորման, երկաթբետոնե սալերի և շրջանակների կառուցման, հիմքերի ուժեղացման աշխատանքները պետք է կատարվեն Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերին ու ստանդարտներին համապատասխան:

Իրականացվող աշխատանքներում օգտագործվող շին կոնստրուկցիաները և սարքավորումները պետք է ունենան առնվազն 10 տարվա երաշխիքային ժամկետ, իսկ ներքոհիշյալ նյութերը՝

1. Հատակ (Լամինատ) – 5 տարի,
2. Պրես գրանիտե սալիկներ – 7 տարի,
3. Առաստաղի, պատերի և այլնի ներքին հարդարում – 5 տարի,
4. Դռներ, պատուհաններ – 8 տարի,
5. Ինժեներական ցանցերի կառուցում-կաթսայատան, կաթսայատան ներքին և արտաքին ցանցերի, արտաքին գազատարի, ջուր-կոյուղի, ջեռուցում և օդափոխություն, էլեկտրական և հակահրդեհային ազդանշանման համակարգերի կառուցման ժամանակ օգտագործվող նյութեր – 10 տարի:

Պ ա տ վ ի Ր ա տ ու՝

**ՀՀ կառավարության առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե**
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011872
ՀՎՀՀ 02565827


Կ ա պ ա լ ա ռ ու՝

«Արիովչին» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ
թաղամաս, 17/1 շենք, բն.14
«Հայրիզնեսրանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150007143333380
ՀՎՀՀ 00110978

Աշխատակազմի ղեկավար՝



Տնօրեն՝



Գրիգորյան

Կ.Տ.

**Երեվան քաղաքի Մ.Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի
հիմնանորոգում Նախահաշիվ-ձավալաթերթ /2017 թ./**

Հ/Հ	Հիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չ/Մ	Քանակ	Աշխատանքի միավորի արժեքը	Ընդհանուրի արժեքը հազ.դր.
1	2	3	4	5	6	7
I. Առաջին մասնաշենքի ընդհանուր շինարարական աշխատանքներ						
1, Հատակներ						
9	5-89	Հետերոգեն ՊՔՎ հատակների նախնական հեղուկ նախաշերտի պատրաստում	քմ	539.6	0.8655	467.02
10	5-128	Հետերոգեն ՊՔՎ 2մմ հաստ. 0,7մմ պաշտպանիչ շերտով հատակների պատրաստում	քմ	539.6	6.9837	3768.38
11	5-43	Փայտե շրիշակների պատրաստում 10սմ բարձր.	գմ	434.8	1.1625	505.45
12	5-20	Հաճարե հատիկավոր մանրահատակի պատրաստում	քմ	37.2	8.2634	307.40
13	14-324 14-385	Մանրահատակի հղկում և լաքապատում 3 անգամ	քմ	37.2	2.9265	108.87
14	14-358	Փայտե շրիշակների լավորակ յուղաներկում	քմ	43.5	1.0304	44.82
15	5-75	Հատակների հիդրոմեկուսացում մեկ շերտ ռուբերոիդով բուտումե մածիկով	քմ	44.6	1.0014	44.66
16	5-115	Հատակների երեսապատում լավորակ կերամիկական սալիկներով 30x30սմ	քմ	33.42	5.6332	188.26
17	5-132	Հատակների երեսապատում մամլոգրանիտե լավորակ սալերով (60x60սմ) չափի	քմ	249.7	11.8166	2950.59
18	13-38	Մամլոգրանիտից շրիշակների պատրաստում 10սմ բարձրությամբ	քմ	11.66	37.7153	439.76
		Ընդամենը հատակներ				8825.212
4, Դռներ և պատուհաններ						
4		Ալյումինե,բրոկով,սպիտակ,46մմ հաստությամբ,առանց ջերմակամուրջի,մեկ տակ ապակի 4մմ,հայկական պրոֆիլներով չբացվող վիտրաժների մոնտաժում	քմ	24.7	20.8330	513.95
		Ընդամենը դռներ և պատուհաններ				513.950
5,Սեյսմազիկվածության բարձրացման աշխատանքներ						
24	6-251 6-249	Պատերի տորկրետավորում յեմենտե շաղախով 6սմ հաստությամբ	քմ	456.7	6.0438	2760.22

31	11-98	Արտաքին ճակատների պատերի սվաղում ցեմենտե շաղախով	քմ	223.0	1.3414	299.13
32	14-420	Արտաքին պատերի ներկում ճակատային ներկով	քմ	542.0	0.7939	430.31
33	3-69	Արտաքին տախտակամածի պատրաստում խողովակներից մինչև 16մ բարձր.	100 քմ	7.86	75.78	595.65
		Ընդամենը ուժեղացոյիմ				4085.312
		Ընդամենը առաջին մասնաշենք				13424.473

Առաջին մասնաշենքի ջեռուցման աշխատանքներ

1	17-141	Ջեռուցման 10 սեկցիանոց թուջե մարտկոցների ապամոնտաժում	հատ	48	1.1789	56.59
2	17-63	Ջեռուցման գոյություն ունեցող պողպատե խողովակներից կանգնակների ապամոնտաժում d=20մմ	զմ	168	0.4497	75.55
3	17-63	Ջեռուցման գոյություն ունեցող պողպատե խողովակների ապամոնտաժում d=15մմ	զմ	96	0.4497	43.17
4	23-118	Անցքերի բացում առաստաղներին 10x10մմ	հատ	24	1.2304	29.53
5	23-132	Անցքերի փակում բետոնե շաղախով	խմ	0.2	83.9713	16.79
6	18-112	Արտասահմանյան արտադրության պլումինե ջեռուցման մարտկոցների մոնտաժում H=350մմ	էքմ	252	0.6510	164.05
7	շուկա	Արտասահմանյան արտադրության պլումինե ջեռուցման մարտկոցներ H=350մմ	հատ	720	4.1827	3011.56
8	16-261	Մետաղապլաստե խողովակների մոնտաժում d=16/12մմ	զմ	96	2.5536	245.15
9	16-261	Նույնը d=20/15մմ	զմ	168	2.6487	444.99
10	Շուկա	Մարտկոցների վերևի փականների մոնտաժում d=15մմ	հատ	48	1.8875	90.60
11	Շուկա	Նույնը ներքևի փականների	հատ	48	1.8558	89.08
12	18-229	Օդահեռացման փականների մոնտաժում d=15մմ	հատ	48	0.3602	17.29
13	16-134	Գնդիկավոր փականների մոնտաժում d=20մմ	հատ	4	3.91	15.66
14	17-157	Խցանների մոնտաժում մարտկոցների վրա d=15մմ	հատ	48	0.4456	21.39
15	17-158	Նույնը կախիչների	հատ	144	0.6556	94.41
16	Շուկա	Ձևավոր տարբեր մասեր	հատ	192	0.6907	132.61
17	16-220	Համակարգի փորձարկում	զմ	264	0.0782	20.65
		Ընդամենը առաջին մասնաշենքի ջեռուցում				4569.072

Առաջին մասնաշենքի էլեկտրա-մոնտաժային աշխատանքներ

3	8-612-2	Լուսավորության վահանակի մոնտաժում եռաֆազ մուտքի ավտոմատով 40Ա հոսանքի համար և 6 հատ 16Ա հոսանքի համար միաֆազ գծային ավտոմատներով	հատ	2	19.5284	39.06
6	8-599-1	Լուսակալի մոնտաժում էներգախնայող լյումինեսցենտային լամպերով, 1x14 վտ հզորությամբ, լամպերը կոմպլեկտի մեջ, գրատախտակի համար	հատ	12	10.1836	122.20
7	8-599-2	Լուսակալի մոնտաժում էներգախնայող լյումինեսցենտային լամպերով, 3x14 վտ հզորությամբ, լամպերը կոմպլեկտի մեջ	հատ	20	7.8437	156.87
8	8-599-2	Լուսակալի մոնտաժում էներգախնայող լյումինեսցենտային լամպերով, 4x14 վտ հզորությամբ, լամպերը կոմպլեկտի մեջ	հատ	85	8.6703	736.97
9	8-599-4	Լուսակալի մոնտաժում առաստաղի, էներգախնայող կոմպակտ լյումինեսցենտային լամպերով, 1x12 վտ հզորությամբ	հատ	20	7.0822	141.64

10	8-599-1	Լուսակալի մոնտաժում պատի, Էներգախնայող կոմպակտ լյումինեսցենտային լամպերով, 1x12 վա հզորությամբ	հատ	1	6.3791	6.38
11	8-600-1	Լուսակալի մոնտաժում փոշի, ջուր չթափանցող, Էներգախնայող կոմպակտ լյումինեսցենտային լամպերով, 1x12 վա հզորությամբ	հատ	8	10.4060	83.25
12	Շուկա	Էներգախնայող կոմպակտ լյումինեսցենտային լամպ 12 վա հզորությամբ	հատ	29	0.6137	17.80
